Այլ եւ միմիանց հակառակ են եւ չեն հաւան. Պարսիկ՝ Թուրքի եւ Թուրքն՝ Քրդից. բայց Պարսիկքն լաւ համարին, թէ Աբրահամու որդիք են: Թողում զառասպել բարբաջմունս նոցա. զամք միայն ի տեսութիւն յառաջարկեալ բանին:

280

ԱԹ-ՊԱՌԱՐ

Օր մի գնացաք ի յԱԹ պաղարն, որ մեծ մօյտան էր. անդ անհամար ուղտք, էշք ծախէին. եւ աժան, զի լաւ ուղտն Ժ զուռուշ տան, որ ի Շամ կամ Հալապ Լ զուռուշ. այլ եւ ագնիւ ձիանք. բայց էշք նոցա ուսուցած է, զի արագ են եւ փոյթ քան զձի. երբ նստի արագն ի վերայ եւ զձայնն լսէ՝ թռչի. զոր մեք տեսեալ հիանայաք ընդ արագութիւն նոցա. եւ մեր ըխտաւորքն գնեցին Լ, Ի. եւ դարմանէին գնոսա լաւ: Իսկ ես ոչ սիրէի զէշն. եւ ոչ զդարշելի ձայնն լսել կամէի, եւ ոչ զսէմէրն: Եւ ասին թէ Երուսաղէմայ ճանապարհն խիստ աւազուտ է, տէկմէ էշ չի դիմանար. եթէ գնես խսրախ մի, դեռ շահիս. եւ ես գնեցի լաւ խսրախ մի Իե զուռուշ: Եւ յորժամ ճանապարհ ելաք, այն արագ իշվան հագիւ շարժէին, քահալ եւ ծոյլ եղեն. եւ որչափ աղաղակէին, առաւել մնային. ընդ որ հիացաք, ոչ գիտելով զպատճառն: Եւ ասին մեզ թէ բազում հիլա ունին. զի ծակոտեն եւ տանջեն (արագք) զիշվանս. այլք զձուս նոցա խա-

5

10

15

20

278 քրթից:
6 յարագ: — 8 յարագութիւն: — յերուսաղէմայ: